*Հավելված 1*

## «Կատապուլտ» ստեղծարար ակսելերացիոն ծրագիր

ԵՄ ֆինանսավորմամբ ծրագիր՝ «Հայաստանում ստեղծարար արդյունաբերության զարգացման խթանում» ծրագրի շրջանակում: Իրականացնողներ՝ ՀԲԸՄ հիմնադրամ Հայաստանը (գլխավոր դիմորդ) և Ստեղծարար Հայաստան մշակութային հիմնադրամը (համադիմորդ):

<u>Ծրագրի ժամկետները</u>՝ 2022 թվականի ապրիլի 1 - 2025 թվականի մարտի 31

<u>Ծրագրի ամփոփագիր՝</u>

«Կատապուլտ» ստեղծարար ակսելերացիոն ծրագիրը նախագծվել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կողմից (ՀԲԸՄ, գլխավոր դիմորդ)՝ Ստեղծարար Հայաստանի (ՍՀ, համադիմորդ) հետ համագործակցությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանում մշակութային և ստեղծարար արդյունաբերության էկոհամակարգի ձևավորման խթանումը, մասնագետների կարողությունների հզորացումը,
զարգացող ստեղծարար տնտեսությանն աջակցումը:

Ծրագիրը նախագծվել է համապարփակ փուլային մոտեցմամբ՝ ներառելով բորոր գործընթացները՝ ստեղծարար մտահղացումից մինչև արտադրություն և սպառում: Այդ իսկ պատճառով, «Կատապուլտ»-ը անդրադառնում է ոչ միայն ստեղծարար մասնագետների այլև ոլորտին օժանդակող ծառայություններում, հաստատություններում և ենթակառուցվածքներում առկա գիտելիքների և հմտությունների բացերին:

Ծրագրի մասնավոր նպատակներն են՝ 1) հզորացնել ստեղծարար ոլորտի մասնագետների կարողությունները՝ ձեռնարկատիրության, ֆինանսների և շուկայագիտության ոլորտում, նաև ստեղծելով ֆինանսական հնարավորություններ՝ համաշխարհային շուկայում հավուր պատշաճի ներկայանալու նպատակով. և 2) լրացնել առկա ծառայությունների, հաստատությունների և ենթակառուցվածքների բացերը՝ մշակութային և ստեղծարար արդյունաբերության ոլորտի իրազեկման, վերապատրաստումների և ներդրումների միջոցով:

<u>Ծրագրի գործողությունների փաթեթներ (հիմնական բաղադրիչներ)</u>

| | |
|---|---|
| 1. Ստեղծարար ոլորտի ներկայացուցիչների ինկուբացում և ակսելերացում (Artbox) | Artbox-ը ինկուբատորի մոդելի վերարտադրություն է՝ արվեստի ոլորտի համար. արվեստագետների համար նախատեսված ձեռնարկատիրական համակարգ, որը համապարփակ աջակցություն է տրամադրում առևտրային հաջողության ներուժ ունեցող ստեղծարար նախագծերին: Ծրագրի այս բաղադրիչը ստեղծվել և իրականացվում է «Ստեղծարար Հայաստան» կազմակերպության կողմից: |

| | |
|---|---|
| 2. Աջակցություն ստեղծարար ոլորտի ներկայացուցիչներին | Միջգերատեսչական համագործակցություն: Ստեղծարար ոլորտի ներկայացուցիչների կարողությունների հզորցման նպատակով համապատասխան վերապատրաստումների, դասընթացների, իրազեկման արշավների կազմակերպում ֆինանսական, իրավաբանական, բարձր տեխնոլոգիական ներուժի և փորձառության ներգրավմամբ: |
| 3. Մշակութային և ստեղծարար ոլորտի ցուցադրություններ | Ստեղծարար ոլորտի հայ մասնագետների և/կամ ստեղծագործությունների մասնակցություն համաշխարհային նշանակության և ինչեղության ցուցահանդես-վաճառքների: |
| 4. Մշակութային և ստեղծարար արդյունաբերության խորհրդի հիմնադրում | Գործընթաց, որը ներառում է բազմաթիվ շահագրգիռ կողմերի համագործակցության ձևավորում, տեղական և միջազգային փորձագետների ներգրավմամբ՝ միջազգային արվեստի խորհուրդների լավագույն փորձը տեղայնացնելու նպատակով, ինչպես նաև մշակույթի, բիզնեսի, քաղաքականության, բրենդինգի և ՏՏ ոլորտի նորարար լուծումների համար զարգացման ուղիներ նշմարելու համար: Նորարարության բաղադրիչը Հայաստանում խորհրդի բացակայության խնդիրը վերածում է հնարավորության՝ առաջարկելով վիրտուալ աշխատանքային գործընթացի և տեղեկատվական համակարգի նոր մոդել, որը խթանում է առցանց համագործակցությունը և համայնք ձևավորում:<br>Արդյունքը կլինի իրավաբանականորեն գրացված կառույց և առցանց հարթակ, որը կմիավորի ոլորտը, կբարելավի առկա ռեսուրսների հասանելիությունը, կօգտագործի հետազոտությունների տվյալները և մշակութային և ստեղծարար արդյունաբերության ոլորտի շահերի պաշտպան կհանդիսանա: |
| 5. Ստեղծարար տարածքներ | Ենթակառուցվածքային ներդրումներ՝ հզորացնելու մշակութային հաստատությունները, բարելավելու նրանց աշխատանքի և ծառայությունների որակն ու նորարար բնույթը և օգնել նրանց էլ ավելի լավ իրականացնել իրենց գործառույթները: Այս ներդրումներն ունեն երեք գործողությունների ձև՝ 1) Artbox. Հանգույց՝ մշակութային հաստատությունների համար հարմարեցված ինկուբացիոն և ակսելերացիոն միջոց, 2) Նորարարության դրամաշնորհներ՝ տեխնիկական վերազինման համար և 3) FabLab՝ թվային լաբորատորիա մշակույթի և ստեղծարար տնտեսության ներկայացուցիչների համար: |

# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության,

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության,

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության,

Հայաստանում եվրոպական միության պատվիրակության

և

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության

միջև

Հայաստանի Հանրապետությունում ստեղծարար արդյունաբերության և մշակույթի ոլորտի զարգացման «Կատապուլտ» ստեղծարար ակսելերացիոն ծրագրի շրջանակում համագործակցության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը՝ ի դեմս նախարարի տեղակալ Գևորգ Մանթաշյանի, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը՝ ի դեմս նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանի, Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում՝ ի դեմս համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսսի և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը՝ ի դեմս Հայաստանի գրասենյակի նախագահի Վազգեն Յակուբյանի (Այսուհետև՝ Կողմերը).

Նպատակ ունենալով խորացնելու և կանոնակարգելու հետագա համագործակցությունը Հայաստանում ստեղծարար արդյունաբերության և մշակույթի ոլորտների զարգացման շրջանակներում

համաձայնեցին հետևյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ 1

Հայաստանում ստեղծարար արդյունաբերության և մշակույթի ոլորտներում, «Կատապուլտ» ստեղծարար ակսելերացիոն ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացում.

«Կատապուլտ»-ը Եվրամիության աջակցությամբ իրականացվող եռամյա նախաձեռնություն է, որի նպատակն է խթանել Հայաստանի ստեղծարար տնտեսությունը՝ հզորացնելով ոլորտի մասնագետների ձեռնարկատիրական հմտություններն ու մրցունակությունը, ինչպես նաև աջակցելու անհատներին, հաստատություններին և ենթակառուցվածքներին՝ իրազեկման, վերապատրաստման և ֆիզիկական ու տեխնոլոգիական ներդրումների միջոցով:

1. **Ծրագրի հիմնական բաղադրիչներն են.**

1) **Art Box** Ոգեշնչված բիզնեսի և SS ոլորտի նորարար մոդելներից՝ Artbox-ը ինկուբատորի մոդելի վերակերտումն է արվեստի համար, մի ձեռնարկատիրական

համակարգ, որն աջակցում է արվեստագետներին դարձնելու իրենց գաղափարները առևտրայնորեն կենսունակ արտադրանքների: Ծրագրի այս բաղադրիչը ստեղծվել և իրականացվելու է «Ստեղծարար Հայաստան» կազմակերպության կողմից:

2) **Ցուցահանդեսներ** Ստեղծարար ոլորտի հայ մասնագետների և/կամ ստեղծագործությունների մասնակցություն համաշխարհային նշանակության և հնչեղության ցուցահանդես-վաճառքների:

3) **Միջոլորտային համագործակցություն** Նպաստելով ստեղծարար ոլորտի ներկայացուցիչների կարողությունների հզորացմանը` համապատասխան վերապատրաստումների, դասընթացների և իրազեկման արշավների կազմակերպում` ներգրավելով ֆինանսական, իրավական, և բարձր տեխնոլոգիաների ոլորտային ներուժն ու գիտելիքները:

4) **CCI Council** Մշակութային և ստեղծարար ձեռնարկությունների խորհրդի հիմնադրում: Առաջին անգամ Հայաստանում կստեղծվի ոլորտի համընդհանուր շտեմարան, ուր ներառված անհատներն ու կազմակերպությունները պարբերաբար կստանան ոլորտային զարգացումների և հնարավորությունների մասին տեղեկատվություն, աջակցություն համաշխարհային հանրությանը հավուր պատշաճի ներկայանալու հարցում: Խորհուրդը նաև շահերի պաշտպանության, կարիքների գնահատման և միջգերատեսչական երկխոսության հարթակ կհանդիսանա:

5) **Ենթակառուցվածքային աջակցություն** Դրամաշնորհների մրցութային ծրագրերի իրականացում, ստեղծարար հանգույցների և FabLab-ի` նորարար բարձր տեխնոլոգիական կենտրոնի հիմնադրում:

**2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն իրենց լիազորությունների ու պարտավորությունների շրջանակներում ապահովում են հետևյալ գործընթացների իրականացումը՝**

1. առաջադրել երկու ներկայացուցիչ (որոշում կայացնող և գործառնական օղակներից)՝ Ծրագրի բազմակողմանի հանձնախմբի կազմում ընդգրկվելու և եռամսյակը մեկ միջգերատեսչական երկխոսությանը մասնակցելու նպատակով,
2. աջակցել հետազոտական նախաձեռնություններին և տվյալների հավաքագրմանը՝ տրամադրելով համապատասխան շտեմարաններից օգտվելու հնարավորություն,
3. նպաստել «Կատապուլտ» ստեղծարար ակսելերացիոն ծրագրի իրականացման հանրայնացմանը (տես` Հավելված 1),
4. աջակցել ստեղծարար կենտրոնների և միջգերատեսչական ցանցերի հիմնադրման գործընթացին՝ տրամադրելով խորհրդատվություն՝ ոլորտային զարգացման առաջնահերթությունների ու ծրագրերի վերաբերյալ,
5. նպաստել ծրագրի արդյունքների, ներառյալ ձեռնարկների, ուսումնական նյութերի տարածմանը,
6. հնարավորությունների սահմաններում ապահովել ծրագրի կայունությունը և շարունակականությունը,

7. իր լիազորությունների շրջանակում տրամադրել ոլորտային մասնագիտական աջակցություն և նպաստել տեղեկատվության տարածմանը:

### 3. Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում պարտավորվում է՝

1. առաջադրել ներկայացուցիչ՝ Ծրագրի բազմակողմանի հանձնախմբի կազմում ընդգրկվելու և եռամսյակը մեկ միջգերատեսչական երկխոսությանը մասնակցելու նպատակով,

2. տրամադրել ֆինանսական աջակցություն՝ ՀԲԸՄ կողմից իրականացվող «Կատապուլտ» ստեղծարար ակսելերացիոն ծրագրին, որն իր հերթին ֆինանսապես կաջակցի ստեղծարար արդյունաբերության և մշակույթի ոլորտի հաստատություններին և անհատներին՝ հզորացնելով ոլորտի մասնագետների ձեռնարկատիրական հմտություններն ու մրցունակությունը (տես՝ Հավելված 1) համապատասխան ENI/2022/432-421 դրամաշնորհային պայմանագրի, որը կնքվել է Եվրամիության և ՀԲԸՄ միջև 2022թ. մարտի 28-ին:
3. իրականացնել ընթացիկ ծրագրերի և նախագծերի շրջանակում արձանագրված առաջընթացի մշտադիտարկում:

### 4. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը պարտավորվում է՝

1. հիմնադրել Մշակութային և ստեղծարար ձեռնարկությունների խորհուրդ և իր բազմակողմանի հանձնախումբը,
2. նախաձեռնել և անցկացնել վերոնշյալ հանձնախմբի եռամսյակային հանդիպումները,
3. տրամադրել հետազոտությունների և տվյալների հավաքագրման արդյունքներն ու տեղեկությունները,
4. իրականացնել Ծրագիրը (տես՝ Հավելված 1),
5. տրամադրել ֆինանսական աջակցություն՝ «Կատապուլտ» ստեղծարար ակսելերացիոն ծրագրին և աջակցել ստեղծարար արդյունաբերության և մշակույթի ոլորտի հաստատություններին ու անհատներին՝ հզորացնելով ոլորտի մասնագետների ձեռնարկատիրական հմտություններն ու մրցունակությունը,
6. իրականացնել ընթացիկ ծրագրերի և նախագծերի շրջանակում արձանագրված առաջընթացի մշտադիտարկում,
7. տրամադրել ստեղծարար արդյունաբերական էկոհամակարգի բարելավման հնարավորություններ,
8. ապահովել ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածումը Հայաստանում,
9. ապահովել Ծրագրում Հայկական սփյուռքի ներգրավվածությունը և համապատասխան մասնագիտական ցանցի ստեղծումը:

## ՀՈԴՎԱԾ 2

Սույն Հուշագիրը ուժի մեջ է 2022-2025թթ.՝ ստորագրության ամսաթվից սկսած: Ժամկետի ավարտին Կողմերը կարող են վերանայել սույն Հուշագիրը և համագործակցությունը շարունակելու որոշում կայացնել:

Կողմերը կարող են փոփոխել, լրացնել սույն Հուշագիրը կամ երկարացնել դրա գործողության ժամկետը: Սույն Հուշագրում ցանկացած նման փոփոխություն, գործողության ժամկետի երկարացում կամ լրացում պետք է կատարվի գրավոր և վավերացվի Կողմերի միջև: Հուշագրի երկու լեզուների անհամապատասխանության դեպքում նախապատվությունը կտրվի հայերեն տարբերակին:

Սույն Հուշագիրը ստորագրված է Երևան քաղաքում 2022թ.-ի հուլիսի 12-ին, հինգ համասարազոր բնօրինակից՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

Արթուր Մարտիրոսյան

______________________

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ

Գևորգ Մանթաշյան

______________________

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ռաֆայել Գևորգյան

______________________

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար

Ֆրանկ Հեսս

______________________

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Հայաստանի գրասենյակի նախագահ

Վազգեն Յակոբյան

______________________

Ամսաթիվ՝ Հուլիսի 12, 2022թ.

*Annex 1*

## KATAPULT Creative Accelerator Program

An EU Funded project in the framework of the "Catalysing creative industries development in Armenia" program. Implemented by AGBU Fund Armenia (Lead applicant) and Creative Armenia Cultural Foundation (Co-applicant).

**Project Dates:** April 1 2022 - March 31 2025

**Project Summary:**
KATAPULT Creative Accelerator Program is a project designed by the Armenian General Benevolent Union Armenia (AGBU, lead applicant ) in partnership with Creative Armenia (CA, co-applicant) with the global objective to vitalize the CCI ecosystem in Armenia, its creative agents and enablers, to catalyze a thriving creative economy. The design of the project takes a full cycle approach, thinking of the process from creative ideation, to production, to market distribution. For this reason, KATAPULT addresses existing knowledge and skills gaps not only for creative professionals, but also within existing support services, institutions and infrastructure. The Specific Objectives are to 1) empower creative professionals with capacity building in business, finance, and marketing, and increased access to funding in order to be competitive players in a global market; and to 2) bridge gaps in existing services, institutions and infrastructure via CCI awareness building, trainings and investment.

**Project Work Packages (Main Activities)**

| | |
|---|---|
| 1. Incubation & Acceleration for Creatives (Artbox) | Artbox is a reinvention of the incubator model for the art world - a dynamic entrepreneurial system that supports artists in developing their ideas into commercially viable and investable creative products. This component of the Program was designed and will be implemented by Creative Armenia. |
| 2. Support to Creative Enablers | Cross Sectoral Cooperation Organization of relevant training, courses, awareness raising campaigns and engaging the financial, legal, high-tech potential and knowledge to contribute to the capacity building of the creative sector representatives. |

| | |
|---|---|
| 3. CCI Showcase Events | Showcase Activities geared towards exhibiting and promoting Armenian creative talent and products at worldwide well-known markets and expos. |
| 4. Establishing a Creative & Cultural Industries Council | A process that includes multi-stakeholder partnership building, and gathering a pool of local and international experts to harness best-practice in international Arts Councils, and diverse know-how in culture, business, policy, branding, and IT technologies, for defining a way forward. An innovation component transforms the problem of Armenia's lack of a council into an opportunity to propose a new model for a virtual working instrument and information system that fosters online collaboration and community.<br>The result will be a legal entity and online cluster that unites the sector, improves access to resources, harnesses collective intelligence, and lobbies for the CCIs. |
| 5. Spaces for Creatives | Infrastructure investments to strengthen cultural institutions, improve the quality and innovative character of their work and services, and help them better serve their communities. These investments take the form of three activities, 1) Artbox: Hub, the Incubation & Acceleration approach adapted for cultural institutions, 2) Innovation Grants, for technical investments, and 3) FabLab for creatives, a digital fabrication space for CCI agents. |

# MEMORANDUM OF UNDERSTANDING

between

Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia,

Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia,

Ministry of Economy of the Republic of Armenia,

Delegation of the European Union to Armenia

and

the Armenian General Benevolent Union

On co-operation within the scope of "KATAPULT" Creative Accelerator Program aimed at the development of the Culture and Creative Industries in the Republic of Armenia and catalyzing the creative economy

The Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia, represented by Artur Martirosyan, Deputy Minister, Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia, represented by Gevorg Mantashyan, Deputy Minister, Ministry of Economy of the Republic of Armenia, represented Rafayel Gevorgyan, Deputy Minister, Delegation of the European Union to Armenia, represented by Frank Hess, Head of Cooperation Section, and the Armenian General Benevolent Union, represented by Vasken Yacoubian, President (hereinafter referred to as "the Parties");

With the intention of deepening and systemizing further cooperation within the scope of development of Culture and Creative Industries in Armenia

Have agreed as follows:

**ARTICLE 1**

Implementation of "Katapult" Creative Accelerator Program (hereinafter referred to as the "Program") in the sectors of creative industries and culture of the Republic of Armenia.

"Katapult" is an EU funded, three-year initiative which aims to vitalize the CCI ecosystem in Armenia by empowering creative professionals with entrepreneurship skills and access to funding, and bridging gaps in existing services, institutions and infrastructure via CCI awareness building, training, and physical and technological investments.

**1. Key components of the program are**

1) **Artbox** Inspired by innovative models in business and tech, Artbox is a reinvention of the incubator model for the art world — a dynamic entrepreneurial system that supports artists in developing their ideas into commercially viable and investable creative products. This component of the Program was designed and will be implemented by Creative Armenia.

2) **Showcase** Activities geared towards exhibiting and promoting Armenian creative talent and products at worldwide well-known markets and expos.

3) **Cross Sectoral Cooperation** Organization of relevant training, courses, awareness raising campaigns and engaging the financial, legal, high-tech potential and knowledge to contribute to the capacity building of the creative sector representatives.

4) **Culture and Creative Industries Council** establishment. For the first time in Armenia, a comprehensive online database of Armenian creatives will be created. Listed individuals and organizations will periodically receive sector developments' and opportunities updates as well as support for proper representation among the world community. The council will act as a platform for advocacy, needs assessment and intergovernmental dialogue.

5) **Infrastructure investments** Implementation of competitive grants program, establishment of the Creative Hubs and FabLab - innovative center of high technologies.

**2. Within the scope of their powers and obligations, Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia, Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia and Ministry of Economy of the Republic of Armenia will ensure implementation of the following:**

1. commit to assign two representatives (decision making and operational levels) that will take part in cross-sectoral dialogue via Multi Stakeholder Committee of the CCI Council on a quarterly basis;
2. support research initiatives and data collection by providing access to relevant databases;
3. support promotion of "Katapult" Creative Accelerator Program (see Annex 1);
4. support the process of establishing creative hubs and cross-sector networks, by providing advice and information on the key priorities and programs with regard to the development of the sector;
5. promote dissemination of the Program outcomes, including manuals and learning materials;
6. ensure, to the extent possible, the sustainability and continuity of the Program.
7. within its powers to provide professional support in this area and promote the dissemination of information

**3. Delegation of the European Union to Armenia will**

1. commit to assign a representative that will take part in Multi Stakeholder Committee of the CCI Council;
2. the representative nominated to take part in the Multi Stakeholder Committee of CCI Council will participate in the cross-sectoral dialogue via Committee meetings on a quarterly basis; provide financial support to "Katapult" (implemented by AGBU) which will inturn financially support Culture and Creative Industries representative individuals and organizations to strengthen the entrepreneurial skills and competitiveness of sector professionals (see Annex 1) in accordance with the grant contract ref ENI/2022/432-421 signed between the EU and AGBU on 28/03/2022
3. monitor the progress of the ongoing programs and projects delivery;

**4. Armenian General Benevolent Union will**

1. Establish CCI Council and its Multi Stakeholder Committee
2. Will initiate and facilitate the quarterly meetings of the Multi Stakeholder Committee of CCI Council;
3. Commit to share insights and evidence from research and other data collecting initiatives
4. Will implement the Program (see Annex 1)
5. provide financial support to "Katapult" and empower Culture and Creative Industries representative individuals and organizations with entrepreneurial skills and competitiveness of sector professionals;
6. monitor the progress of the ongoing programs and projects delivery;
7. provide opportunities for improving the Creative Industries ecosystem;
8. ensure dissemination of information on the Program in Armenia;
9. Ensure Armenian Diaspora engagement in the Program and relevant professional network building;

**ARTICLE 2**

This Memorandum shall be effective from 2022 to 2025, upon signing. Upon the expiry of this term, the Parties may review this Memorandum and make a decision on continuing the co-operation.

The Parties may amend, supplement or extend the effective term of this Memorandum. Any amendment, extension or supplement to this Memorandum must be made in writing and be validated by the Parties. In the event of inconsistency between the two versions of the Memorandum, the Armenian version shall prevail.

This Memorandum is signed on 12 July 2022, in Yerevan, in five original copies, in Armenian and English languages.

| Deputy Minister of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia | Deputy Minister of High-Tech Industry of the Republic of Armenia | Deputy Minister of Economy of the Republic of Armenia |
|---|---|---|
| Artur Martirosyan | Gevorg Mantashyan | Rafayel Gevorgyan |

| Head of Cooperation Section of Delegation of the European Union to Armenia | Armenian General Benevolent Union Armenia President |
|---|---|
| Frank Hess | Vasken Yacoubian |

Date: 12 July 2022